ՀԱՎԵԼՎԱԾ 2-ի

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՇԳՑ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇՈԳԵՏՈՒՐԲԻՆԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Տեխնիկական բնութագիր

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար

ՀՇԳՑ էներգաբլոկի շոգետուրբինի ընթացիկ նորոգման աշխատանքների

ԲԱԺԻՆ 1. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԻ

1.1. FUJI 63.6 MW, 63.6 ՄՎտ շոգետուրբինի ընթացիկ նորոգում, 1.2. GTLRI 514/57-2, 75 ՄՎԱ Գեներատորի ընթացիկ նորոգում

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Տեխնիկական բնութագրերով կատարվող աշխատանքների պատվիրատու և օգտագործող է հանդիսանում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ : Վերանորոգումն իրականացնում է մրցույթը շահած կազմակերպությունը:
Ենթաբաժին 2.1 Տեղեկություններ աշխատանքների իրականացան վայրի վերաբերյալ
2.1.1. Աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ -ում: 2.1.2.Աշխատանքների իրականացման վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, ՀՇԳՑ էներգաբլոկի տարածք:

ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ենթաբաժին 3.1 Աշխատանքների իրականացման ընթացքում գործող տեխնիկական պահանջները
3.1.1. Աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը ներկայացվող պահանջները 3.1.1.1.Աշխատանքների իրականացման թույլտվություն է ստանում այն անձնակազմը, որը սահմանված կարգով ուսուցում և պատրաստում է անցել, ունի ինքնուրույն աշխատանքի թույլտվության հավաստագրեր , անցել է բժշկական զննություն: 3.1.1.2.Կապալառուն պետք է իրականացնի կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ, որոնք ապահովում են աշխատանքի անվտանգությունը՝ ՀՀ-ում գործող անվտանգության կանոնների պահանջներին համապատասխան: 3.1.1.3.Կապալառուն «ԵրՋԷԿ»-ին է տրամադրում սարքավորումների կապիտալ նորոգման աշխատանքներ կատարող անձանց ցուցակը (ապահովելով ծավալաթերթով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ քանակությամբ անձնակազմ),

3.1.1.4. Կապալառուն պետք է ունենա գործիքների, հանդերձանքի, չափիչ սարքերի (ստուգաչափված) անհրաժեշտ համակազմ և հարմարանքներ՝ նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

3.1.2. Պլանավորում, վերահսկում և հաշվետվություն

3.1.2.1. Կապալառուն պետք է ներկայացնի աշխատանքների կազմակերպման պլան (ПОР), որը պետք է համաձայնեցվի «ԵրՋԷԿ»-ի գլխավոր ճարտարագետի և արտադրող գործարանի կողմից ներկայացված ժամանակացույցի համաձայն:

3.1.2.2.Կապալառուն աշխատում է «ԵրՋԷԿ»-ի կողմից հաստատված վերանորոգման գծային ժամանակացույցով:

3.1.2.3. Կապալառուի կողմից կատարվող բոլոր աշխատանքները պետք է պլանավորվեն՝ հաշվի առնելով.

- կայանի՝ վերանորոգման, փորձարկման ժամանակացույցները և պարտադիր կերպով պետք է համաձայնեցվեն «ԵրՋԷԿ»-ի համապատասխան պատասխանատուների հետ,
- աշխատանքների կատարումը շաբաթական 6-օրյա ռեժիմով մեկ հերթափոխով ըստ «ԵրՋԷԿ»-ի հետ համաձայնեցված աշխատանքների ժամանակացույցի:

3.1.2.4. Աշխատանքների համակարգումն իրականացվում է կապալառու կազմակերպության, ԵրՋԷԿ-ի պատասխանատուների և արտադրող գործարանի պատասխանատուների կողմից:

3.1.3. Աշխատանքների իրականացման կարգը

3.1.3.1. Կապալառուն նախքան էներգաբլոկի կանգառը ապահովում է նախապատարաստական աշխատանքների իրականացումը և ավարտական աշխատանքները էներգաբլոկի թողարկումից հետո, ինչպես նաև անց է կացնում փորձարկումներ:

3.1.3.2. Կապալառուն իրականացնում է քանդման, հավաքման և վերանորոգման աշխատանքները:

3.1.3.3. Կապալառուն կազմում և «ԵրՋԷԿ»-ին է տրամադրում հաշվետու տեխնիկական փաստաթղթերը, որը հանդիսանում է հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մաս:

ԲԱԺԻՆ 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

4.1. Աշխատանքների ծավալը պետք է համապատասխանի պայմանագրին կից աշխատանքների ծավալաթերթին

ԲԱԺԻՆ 5. ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5.1. Հատուկ գործիքներն ու պահեստամասերը տրամադրում է ԵրՋԷԿ-ը:
5.2 Աշխատանքների համար օգտագործվող գազերը (թթվածին, արգոն, պրոպան, ացետիլեն և այլն) տրամադրում է կապալառուն:
5.3 Ստանդարտ գործիքները և աշխատանքների համար անհրաժեշտ արագամաշ սպառվող և մաքրող նյութերը տրամադրում է կապալառուն:

ԲԱԺԻՆ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6.1. Աշխատանքներն իրականացնելու ընթացքում պայմանագրով աշխատանքների կատարման և զբաղեցրած շինությունների և շենքերի, իրեն կցված տարածքների և հաղորդակցուղիների շահագործման ժամանակ Կապալառուն, գործող օրենսդրության համաձայն, պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության՝ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործող օրենքների և այլ օրենսդրական ակտերի ու նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտման համար:

6.2. Աշխատանքների ընթացքում պետք է բացառել անթույլատրելի կոնցենտրացիա առաջացնող քանակի ագրեսիվ, քիմիապես ակտիվ աերոզոլների, գազերի մուտքը աշխատատեղեր և անձնակազմի գտնվելու տարածքներ:

6.3. Աշխատանքների ընթացքում պետք է բացառել քիմիապես ակտիվ հեղուկների (նավթամթերքներ, թթուներ, ալկալիներ, լվացման ջրեր և այլն) թափանցումը և դրանցով շենքերի, կառույցների, կոնստրուկցիաների տարրերի, ինչպես նաև սարքավորումների մակերևույթների տոգորումը:

6.4. Իրականացվող աշխատանքների ընթացքում և ավարտից հետո գոյացող բոլոր թափոնները պետք է մեկուսացվեն և/կամ օգտահանվեն՝ համաձայն «ԵրՋԷԿ»-ում գործող կանոնակարգերի, հրահանգների, սխեմաների:

ԲԱԺԻՆ 7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Աշխատանքների իրականացման ժամկետները սահմանվում են Պայմանագրի Օրացուցային գրաֆիկով:

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՇԳՑ էներգաբլոկի շոգետուրբինի ընթացիկ նորոգման աշխատանքների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական և ավարտական աշխատանքներ	30.08.2026 23.09.2026	02.09.2026 25.09.2026
2	63.6 MW շոգետուրբինի նորոգում	03.09.2026	22.09.2026
3	GTLRI 514/57-2 , 75 ՄՎԱ Գեներատորի նորոգում	06.09.2026	22.09.2026
4	Մետաղի ստուգման աշխատանքներ	10.09.2026	20.09.2026
	ԸՆԴԱՄԵՆԸ	**30.08.2026**	**25.09.2026**

7.2. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի մաս և գործում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի օպերատիվ ենթակայության ներքո, որից հետևում է, որ Օրացուցային գրաֆիկով սահմանված Աշխատանքների

իրականացման ժամկետները հնարավոր է տեղափոխվեն՝ կախված «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հրահանգներից:

ԲԱԺԻՆ 8. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8.1. Աշխատանքների իրականացումը պետք է լիովին համապատասխանի պայմանագրին կից աշխատանքների ծավալաթերթին,

8.2. Իրականացվող աշխատանքների որակի ապահովումն իրականացվում է Կապալառուի կողմից և վերահսկվում է «ԵրՋԷԿ»-ի և արտադրողի համապատասխան անձնակազմի կողմից (յուրաքանչյուրն իր պատասխանատվության սահմաններում):

ԲԱԺԻՆ 9. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9.1. Աշխատանքները կարող են իրականացվել աշխատող սարքավորումների անմիջական մոտակայքում, որի կապակցությամբ Կապալառուն պետք է ապահովի անվտանգության բոլոր պահանջների անվերապահ կատարումը, ինչպես նաև «ԵրՋԷԿ»-ում գործող համապատասխան փաստաթղթերում նշված տեխնիկական և տեխնոլոգիական սահմանափակումների պահպանումը:

9.2. Աշխատանքների իրականացման ընթացքում պետք է երաշխավորվի բնականոն սխեմայով շահագործվող հարակից համակարգերի և սարքավորումների վրա որևէ ազդեցության բացակայությունը:

9.3. Աշխատանքների իրականացման ընթացքում պետք է բացառվի սարքավորումների, շինարարական կառուցատարրերի և տրանսպորտային հաղորդակցուղիների վնասումը:

9.4 Բեռնբարձման և բեռների տեղափոխման բոլոր աշխատանքները իրականացնել համապատասխան թույլատրություն ունեցող Կապալառուի աշխատակիցների կողմից:

9.5 Հաստոցային մշակման համար անհրաժեշտ սարքերը, դետալները սեփական միջոցներով տեղափոխել ՀՇԳՑ էներգաբլոկի տարածքից դեպի կապալարուի նորոգման տեղամաս և աշխատանքների ավարտից հետո նորոգման տեղամասից դեպի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի տարածք:

9.6 Պատվիրատուին վերադարձնել հանված հին դետալները, իսկ աշխատանքների ավարտից հետո՝ հատուկ գործիքները և հարմարանքները սարքին, աշխատունակ վիճակում համաձայն հանձնման-ընդունման ակտի: Կորստի կամ վնասման պարագայում կապալառուն պարտավորվում է փոխհատուցել վնասված մասի արժեքը:

9.7 Աշխատանքներն ավարտելուց հետո Կապալառուն պետք է հավաքի կողմնակի առարկաները, և պետք է վերականգնվեն վերանորոգման ընթացքում ապամոնտաժված բոլոր սարքավորումներն ու կառուցատարրերը:

9.8 Աշխատանքների ընթացքում գոյացած աղբը կապալառուն պարտավոր է պարբերաբար հեռացնել «ԵրՋԷԿ»-ի տարածքից, բացառությամբ արտադրական վտանգավոր թափոններից:

ԲԱԺԻՆ 10. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻՆ ԵՎ ԾԱՎԱԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքների ոչ պատշաճ իրականացման համար՝ ներառյալ երաշխիքային ժամանակահատվածում օբյեկտի շահագործման ընթացքում հետագայում հայտնաբերված թերությունները:

10.2. Կապալառուի կողմից իրականացված աշխատանքների երաշխիքային ժամկետը կազմում է ոչ պակաս, քան 365 օր՝ Հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից սկսած:

10.3. Տրված երաշխիքի գործողության ժամանակահատվածում նորոգված սարքավորումների աշխատանքում ոչ պատշաճ որակով պայմանավորված շեղումներ (արատներ, առանձին գործառույթների կորուստ, կանոնակարգված պարամետրերին չհասնելը, վնասվածքներ, խափանումներ, վթարներ և այլն) հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնել հայտնաբերված անհամապատասխանությունները և դրանց հետևանքները:

10.4. Եթե կապալառուի կողմից թույլ տրված շեղումների պատճառով «ԵրՋԷԿ»-ը ֆինանսական կորուստներ կրի, կորուստների փոխհատուցումը կիրականացվի Կապալառուի հաշվին:

ԲԱԺԻՆ 11. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11.1. Աշխատանքները կատարելիս Կապալառուն պետք է առաջնորդվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներով, որոնք կանոնակարգում են աշխատանքների որակը, անվտանգ կատարումը և ընթացիկ նորոգման աշխատանքների ավարտից հետո օբյեկտների շահագործման ընդունումը:

11.2. Աշխատանքները պետք է կատարվեն միայն ձևակերպված կարգագրի (հրամանի) առկայության դեպքում՝ «ԵրՋԷԿ»-ում գործող կարգի համաձայն անվտանգության տեխնիկայի կանոնների և հրդեհային անվտանգության միջոցների պահպանմամբ:

11.3. Աշխատանքների իրականացման ընթացքում ներգրավված անձնակազմի անվտանգության ապահովումը Կապալառուի պարտականությունն է: «ԵրՋԷԿ»-ն իրավունք ունի կասեցնել Կապալառուի կողմից կատարվող աշխատանքներն անվտանգության պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք սպառնում են անձնակազմի առողջությանը, սարքավորումների, շինարարական կառուցատարրերի ամբողջականությանը և/կամ կարող են վնաս հասցնել շրջակա միջավայրին:

11.4 Աշխատանքներ կատարելիս Կապալառուն հսկում է՝ ԵրՋԷԿ-ը վերահսկում անվտանգության պահանջների պահպանումը:

ԲԱԺԻՆ 12. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12.1. Կատարված աշխատանքների ընդունումն իրականացվում է աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ձևակերպմամբ, որը կազմվում է փաստացի կատարված աշխատանքների ծավալով: Ծավալաթերթ նախահաշվում ներկայացված բայց փաստացի չկատարված աշխատանքները չեն կարող ներառվել հանձնման ընդունման ակտում

12.2. Կապալառուի կողմից «ԵրՋԷԿ»-ի ընդունող հանձնաժողովին ներկայացվող կատարողական փաստաթղթերի լրակազմի նախնական ցանկը պետք է համաձայնեցվի «ԵրՋԷԿ»-ի հետ:

12.3. Ավարտված աշխատանքների արդյունքում սարքավորումների պարամետրերը պետք է համապատասխանեն նախագծային և աշխատանքային փաստաթղթերի դրույթներին և պահանջներին:

12.4. Հաշվետու փաստաթղթերի կազմը և ծավալը պետք է համապատասխանեն «ԵրՋԷԿ»-ում գործող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի դրույթներին և պահանջներին և պետք է համաձայնեցված լինեն «ԵրՋԷԿ»-ի հետ:

ԲԱԺԻՆ 13. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

13.1. Կապալառուի կողմից մշակված բոլոր փաստաթղթերը «ԵրՋԷԿ» փոխանցելուց առաջ պետք է պատշաճ կերպով ձևակերպված և ստորագրված լինեն կատարողների, ստուգողների, համաձայնեցնող և հաստատող անձանց կողմից:

Ծավալաթերթ-նախահաշիվ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ էներգաբլոկի շոգետուրբինի ընթացիկ նորոգման աշխատանքների

No	*Աշխատանքի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*	*Նախահաշվային արժեքը ընդհանուրի նկատմամբ % -ներով*
1	*2*	*4*	*5*	*7*
1	***I. 63.6 MW շոգետուրբին***			***88.2731***
2	*Տուրբինի և գեներատորի սրահի առաստաղի պաշտպանիչ վահանների ապամոնտաժում և մոնտաժում*	*մ³*	*10*	
3	*Տուրբինի փականների ջերմամեկուսացման քանդում*	*մ³*	*2.1*	
4	*Առջևի հենարանի նորոգում /դիմահար հենարանային/առանց ներդրակի փոխարինման և վերալցման և ռոտորի հանման*	*հատ*	*1*	

5	ՏՌ - ԳՌ հենարանի նորոգում, առանց ներդրակի փոխարինման և վերալցման և ռոտորի հանման	հատ	1	
6	ԳՌ հենարանի նորոգում , առանց ներդրակի փոխարինման և վերալցման և ռոտորի հանման	հատ	2	
7	Տուրբաագրեգատի լիսեռագծի կենտրոնադրման թերությունների վերացում	հատ	1	
8	Զույգ ռոտորների միացման ծնկաձևության վերացում	հատ	1	
9	Լիսեռադարձկեն հարմարանքի նորոգում	հատ	1	
10	ԲՀ և ՑՀ ավտոմատ փակաղակի կափույրի նորոգում մետաղի հղկումով	հատ	2	
11	ԲՀ կարգավորող կափույրի նորոգում մետաղի հղկումով	հատ	2	
12	ՑՀ կարգավորող կափույրի նորոգում մետաղի հղկումով	հատ	2	
13	Տուրբինի իրանի ջերմամեկուսացման տեղադրում	$մ^3$	2.1	
14	Կարգավորման կափույրի շարժաբերի (ակտուատոր) նորոգում, կարգաբերում	հատ	2	
15	6.3$մ^3$ և 0.35$մ^3$ծավալով Յուղաբաքերի նորոգում մաքրում, ֆիլտրերի լվացում	հատ	2	
16	Գազահեռացման սարքի (էքսգաուստեր) նորոգում	հատ	2	
17	***II. GTLRI 514/57-2 , 75 ՄՎԱ Գեներատոր***			***11.0667***
18	Տուրբագեներատորի վահանների, դիֆուզորների, հանում և տեղադրում	հատ	2	
19	Խոզանակային սարքի հանում և տեղադրում	սարք	1	
20	Խոզանակային սարքի նորոգում առանց հպօղակները հղկելու	սարք	1	
21	Օդահովացուցիչի հանում, մաքրում, կիպացնող ռետինների փոխարինում, հավաքում , մամլում և տեղադրում	հատ	4	
22	***III. Մետաղի ստուգման աշխատանքներ*** Տեսողական-չափողական զննում, գունավոր արատանշում և ՈՒՁԱ	դմ^2	115	***0.6602***

Ծանոթագրում՝ - Նորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են սարքավորումների մասերի կազմատում, մաքրում, լվացում, արատառորոշում, արատավոր դետալների փոխարինում, հավաքում :

- *Նորոգման ընթացքում մաքրման աշխատանքների համար օգտագործվող նյութերը տրամադրում է կապալառուն:*
- *Նորոգման ընթացքում օգտագործվող ընդհանուր օգտագործման (ստանդարտ) գործիքները տրամադրում է կապալառուն, (բացի հատուկ գործիքներ, սարքվածքների հարմարանքներ և այլն):*